*լեառնէն*[1] *փախե[ա]լ*[2] *որդին Խուղբադրա[յ]։* 74 *Եւ ընդ մէջ Բուլղարաց*[3] *եւ ծովուն Պոնտոսի բնակեն ազգ[ք]*[4] *Գարշք եւ ՔուԹք եւ Սւանք մինչեւ ցՊիսինուն քաղաք*[5] *ծովեզերա[յ]ին Աւազով աշխարհի, որ են Ափշիլք եւ Ափխազք, մինչեւ ցքաղաքըն*[6] *իւրեանց ծովեզերա[յ]ին Սեւաստուպալիք, եւ անդր եւս մինչեւ ցգետն, որ կոչի Դուակոն*[7], *որ է «Վիշապ», որ հոսի յԱղ'անաց*[8] *եւ բաժանի ընդ Ափխազս եւ ընդ Եգր*[9] *աշխարհ։*

75 *Եւ ունի ազգազաւառս քառասուն եւ վեց*[10]*։* 76 *Եւ ի հիւսիսո[յ]՝ առ Անծանաւթ երկրաւ բնակեն Թագաւորական [Ս]արմա՛տք*[11] *եւ Ջիակերք։* 77 *Իսկ առ մտիւքն Տանա[յ]իս*[12] *գետո[յ] բնակեն*[13] *Նախճամատեանք եւ ազգ մի այլ, որ են Կղարջք, եւ ապա [Որջլակերք]*[14]*, Սիւռակացիք, ապա Միթռոդէտէն*[15] *գաւառն։* 78 *Եւ ապա յաբեւելից կուսէ Շանթա[յ]ին լերանցն բնակե[ա]լ*[16] *են Ամազունք, որք են կանայք պատերազմողք*[17]*, մինչեւ ցգետն, որ կոչի ԻՌա*[18]*, որ երկակի բղխէ ի հիւսի'սո[յ]*[19] *Անծանաւթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ջիական լերանցն՝ արձակէ վտակ մի ի Տանա[յ]իս*[20] *գետս*[21]*, որով*[22] *ի Միովտիս*[23] *ծովակ իջանէ, եւ այլն դառնա[յ] յարեւելս կոյս՝* [20բ] *մինչեւ հանդէպ Շանթա[յ]ին լերանցն, եւ ապա գան այլ երկու*[24] *գետք յարեւելից կուսէ, ի հիւսիսոյ լեռնէն, որ կոչի Ռիմիկա[յ], եւ առնեն զնա Եւթանասնասնավտակեան*[25]*, զոր կոչեն Թուրք[ք]*[26] *Աթլ գետ։* 79 *Որո[յ] մէջն է կղզի, յոր մտեալ ամրանա[յ] Բասլաց ազգն ի հզաւր ազգէն Խազրաց եւ Բ[ո]ւշխաց*[27]*՝ ճարակելոց յելից եւ ի մտից, եկելոց անդ ի ձմերոց, եւ կնոչեն*[28] *«Սեւ կղզի», զի յաղագս բազմութեանն ազգին Բասլաց, մարդո[յ] եւ անասնո[յ] անդ մտելոցն՝ սեւ երեւի, զոր Պտղոմէոս*[29] *Գուաւ կղզի կոչէ։* 80 *Եւ վտակքն Աթլ գետո[յ] անցեալ կղզին*[30]*՝ դարձեալ միանան եւ մտանեն*[31] *ի Կասբից ծովն՝ բաժանելով*

1 *VS* լեառնէն *փխ* լեառնէն *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

2 *V* փախև *փխ* փախե[ա]լ *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ե.58)*

3 *S* Պուլղարաց *փխ* Բուլղարաց *(V)*

4 *V* ազգ *փխ* ազգք *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.13, Գ.56 եւն)*

5 *V-ում պատուոյ նշանով* Թ̄յ*-անման գաղափարագիրն է. Սուքրեանն այդ «քաղաք» բառը դրել է փակագծերում, թէպէտ նոյնը չի արել յաջորդ տողում, ուր* ցքաղաքն *բառը նոյն նշանով է*

6 *V* ցԹ̄յքն *փխ* ցքաղաքն *(վեր. Սուքրեանի)*

7 *V* Գռակոն *փխ* Դռակոն *(վեր. Սուքրեանի. հմմտ. բոլորագիր* **ղ** → **գ***)*

8 *V* յԱղուանաց, *S* յԱղուանաց *փխ* յԱղ'անաց *(վեր., հմա՛* Ալանաց. *քանի որ* Աղուանք*-ի սեռականը V-ում մշտապէս* Աղուանի**ց** *է)*

9 *V* Էգր *փխ* Եգր *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

10 *V* խ̄զ̄

11 *V* արմարտք *փխ* [Ս]արմատք *(վեր. Սուքրեանի)*

12 *V* Տաանիս *փխ* Տանայիս *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. հմմտ. նաեւ նախ. Բ.30)*

13 *S* բնակին *փխ* բնակեն *(V. հմմտ. 2 տող վերեւ, կամ նախ. Գ.18, 56, Դ.25, 46, Ե.74, 90, 230 եւն)*

14 *VS չիք* Որջլակերք *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)*

15 *V* Միդոսդէսէն, *S* Միդոսդեսէն *փխ* Միթռոդէտէն *(վեր., տե՛ս բարբառային* **Թ** → **Դ** *եւ բոլորագիր* **ռ** → **ո**, **ռ** → **ս**, **տ** → **ս**. *V-ում երկրորդ* **դ***-ն առաջին* **ս***-ի վերեւում է՝ կայծակնաձեւ նշանով. համառօտում* Միթռիկացիք է. *Երեմեանը վերականգնում է* Միթռիդատենէ՝ *ըստ Պտղոմէոսի)*

16 *V* բնակել *փխ* բնակեալ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր՝ նախ. Ա.28, 38, Գ. 58, Ե.88, 219, 330)*

17 *Կողքի լուսանցքում ուշ ձեռագրով պատուոյ նշաններով ձեւաւորուած է.* «Աշխարհ կանաց» *(առաջին բառն՝ ալիքաձեւ գաղափարագրով)*

18 *VS* Իռա *փխ* Ռա *(վեր., տե՛ս* կոչ**ի** – **ի**ռա*)*

19 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսո[յ] *(վեր. Սուքրեանի)*

20 *V* Տաանիս *փխ* Տանայիս *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. հմմտ. նաեւ նախ. Բ.30)*

21 *V* գետո, *S* գետոյ *փխ* գետս *(վեր., տե՛ս* **ս** … **ո***)*

22 *S* որ *փխ* որով *(V. բառավերջի* **ով** *տառերը գրիչը փոխարինել է «անվերջութեան» նշանով՝ ∞)*

23 *V* Միովիտս, *S* Միովիտ *փխ* Միովտիս *(վեր.՝ ըստ նախորդի (տե՛ս նախ. Բ.29 եւ Ե.70-ի ծնթ.). հմմտ.* **տի**ս → **իտ**ս*)*

24 *V* բ̄

25 *V* հ̄ասնաւտակեան, *S* Եօթանասնավտակեան *փխ* Եւթանասնասնավտակեան *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ա.25)*

26 *V* Թուրք *փխ* Թուրքք *(վեր. Սուքրեանի)*

27 *VS* Բւշխաց *փխ* Բ[ո]ւշխաց *(վեր., գուցէ եւ, վերծանելի է* Բ[ի]ւշխաց *ձեւով)*

28 *V* կնոչեն *փխ* կոչեն *(վեր. Սուքրեանի)*

29 *VS* Պտլոմէոս *փխ* Պտղոմէոս *(վեր. ըստ այլոց. տե՛ս, օր.՝ նախ. Ա.30, Բ.33, 37, Դ.33, Ե.206 եւն)*

30 *S* [ընդ] կղզին *(V)*

31 *Գրիչն* **ա***-ի վրայ ինչ-որ կայծակնաձեւ նշան ունի*